



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ²²⁵
20 հունիսի 2024 թվականի N - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ
կառավարության 2024 թվականի մարտի 14-ի «Բուսաբուծության աջակցության
ծրագիրը հաստատելու մասին» N 384-Լ որոշման 21-րդ կետը,

որոշում եմ.

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության
աջակցության ծրագրով մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել
աշխատանքային խումբ՝ համաձայն հավելված N 1-ի:
- Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում
բուսաբուծության աջակցության ծրագրով մոնիթորինգ իրականացնելու արդյունքում
կազմվող արձանագրության ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:
- Հաստատել մոնիթորինգի իրականացման ենթակա ցանքատարածությունների
նվազագույն քանակը՝ ըստ համայնքների, համաձայն հավելված N 3-ի:
- Աշխատանքային խմբին՝
ա/ տվյալ համայնքի կողմից մոնիթորինգ իրականացվելուց հետո, բայց ոչ ուշ
քան բերքահավաքը, էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ
ապահովել ընդգրկված շահառուների առնվազն քան տոկոսի ընտրանքային

մոնիթորինգի իրականացումն, այդ թվում՝ բուսաբուծության աջակցության ու այլ փաստաթղթերի ուսումնասիրություն և արձագրության կազմում:

բ/ մոնիթորինգն իրականացվելուց հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում ամփոփել իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ներկայացնել մարզպետին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

5. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել հավելվածով նշված աշխատակիցների գործուղման ծախսերը:



2024-06-21 12:12:26 GMT+4
Հավանական է էԿԵՆԳ-ի կողմից



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ռ. Ղուկասյան

2024թ. հունիսի 20
ք. Կապան



Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում քաղաքացիության աջակցության ծրագրով մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ն. Ղազարյան - Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Ռ. Կոստանդյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Է.Բունիայան- Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Գ.Դավթյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Կ.Փարսադանյան Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար

Է. Մարտիրոսյան



Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. հունիսի 20-ի N 225 որոշման

Արձանագրություն

ՀՀ կառավարության 14 մարտի 2024 թվականի N 384-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում բուսաբուծության աջակցության ծրագրի՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի

Համայնք՝ _____, Բնակավայր՝ _____

Շահառու՝ _____

Ցանքատարածության մակերեսը՝ _____ հա

Ցանքը կատարված է՝

հավաստագրված սերմացուով

Մոնիթորինգի եզրակացությունը՝ (Համապատասխան վանդակում կատարել V-աձև գրառում)

ԴՐԱԿԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ն. Ղազարյան


Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ռ. Կոստանդյան

_____ Է. Բունիայան

_____ Գ. Դավթյան

_____ Կ. Փարսադանյան

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար

 Է. Մարտիրոսյան



Հավելված N 3

ՀՀ Սյունիքի մարզպետի

2024թ. հունիսի 20-ի N 225-ժրոշման

ՑԱՆԿ

մոնիթորինգի իրականացման ենթակա ցանքատարածությունների նվազագույն քանակը՝ ըստ համայնքների

ՀԱՄԱՅՆՔ	ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՆԹԱԿԱ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ
Կապան	134,8	27
Գորիս	68,6	14
Սիսիան	515,4	103
Տեղ	68,3	14
Տաթև	59,3	12

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար

Է. Մարտիրոսյան